«1 + 4»-ը ամենահաջողված պետական ծրագրերից է

Այսպես են սկսվում այս թեմային նվիրված յուրաքանչյուր հոդվածի կամ ռեպորտաժի սկիզբը («1+4»-ը ամենահաջողված պետական ծրագրերից է)։ Իմն էլ բացառություն չէ։

Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին արտոնյալ պայմաններով ստանան բարձրագույն կրթություն։

Մասնավորապես, դիմորդներն իրենց մայրենի լեզվով հանձնում են միայն ընդհանուր հմտությունների թեստը։ Ծրագրի դրական կողմերի մասին այս դեպքում խոսելն ավելորդ է, քանի որ նախ պետք է նշել մեկ կարևոր բան՝ ծրագիրն իր էությամբ անհավասար է և խտրական։ Ի՞նչումն է ծրագրային անհավասարությունը և ինչո՞ւ է այն խտրական։ Այս հարցին կփորձեմ մանրամասն և հիմնավորված պատասխանել իմ բլոգում։

Կսկսեմ ծրագրային անհավասարության խնդիրը վերանայելով.

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար անհրաժեշտ է քննություն հանձնել ընդհանուր հմտություններ առարկան հայերեն լեզվով։ Դպրոցական կրթությամբ դրան հնարավոր չէ հասնել։ Ընդհանուր հմտությունների թեստը բավականին դժվար է։ Հաջողությամբ հանձնելու, համար պետք է պատրաստվել անհատական ուսուցչի մոտ։ Սա, իհարկե, կապված է լրացուցիչ ծախսերի հետ։

Օրինակ, իմ ծանոթների շրջանում բավականին երիտասարդներ կան, ովքեր լավ են սովորում դպրոցում։ Բայց նրանցից շատերը չեն կարողանում կրկնուսույցի մոտ գնալ ժամանակի կամ ֆինանսական հնարավորությունների բացակայության պատճառով։ Գյուղում ապրող դիմորդների համար խնդիր է նաեւ տրանսպորտը։ Վարչական կենտրոնին կապող քաղաքային տրանսպորտ բացակայություն պատճառով։ Մասնավոր տրանսպորտը լրացուցիչ ծախսեր է առանց այդ էլ կարիքավոր ընտանիքների համար։

Արդյունքում, այն երիտասարդները, ովքեր չեն գնում մասնավոր ուսուցչի մոտ, հաճախ ցածր միավորներով են հանձնում ընդհանուր հմտությունների թեստը։ Սա նշանակում է, որ նախապատրաստական դասընթացը կլինի վճարովի մեկ տարվա ընթացքում։ Առաջին կուրսում ուսանողները մեծ պատասխանատվությամբ և ջանասիրությամբ են վերաբերվում ուսմանը։ Նրանք իրենց աշխատասիրության արդյունքում ստանում են նաև կրթաթոշակ, որը կօգնի վճարել ուսման վարձը կամ լուծել բնակարանի վարձակալության խնդիրը։

Այսօր ամեն ընտանիք չունի համապատասխան ֆինանսական հնարավորություն, որպիսզի իր երեխային տանի մասնավոր ուսուցչի մոտ։ Միայն ֆինանսապես ապահովված ընտանիքների երեխաները կարող են իրենց թույլ տալ լրացուցիչ, ամենօրյա պարապմուքներին մասնակցելու հնարավորություն և ձեռք բերեն պետական դրամաշնորհներ ստանալու շքեղություն։ Արդյունքում յուրաքանչյուր էթնիկ համայնքից ամենաբարձր վարկանիշ ունեցող 100-100 ուսանողներ պետական ֆինանսավորում են ստանում վրացերենի մեկամյա դասընթաց անցնելու և ուսումը անվճար շարունակելու համար։ Ստացվում է, որ այս 100 ուսանողների շարքում հանդիպում են նրանք, ովքեր հնարավորությունեն ունեցել պարապելու կրկնուսույցի հետ։ Միաժամանակ՝ նրանք, ովքեր ունեն ցանկություն,

աշխատասիրություն, փորձում են ինքնուրույն սովորել, բայց չեն կարողանում մրցել մասնավոր կրկնուսույցի կողմից վերապատրաստվածների հետ։

Արդյոք պետությունն ինքը չպե՞տք է ապահովի, որ դրամաշնորհը բաշխվի ոչ թե ըստ ֆինանսական հնարավորությունների, այլ ըստ ընդունակության, աշխատասիրության և ակադեմիական հաջողությունների։ Ինչո՞ւ միջնակարգ դպրոցը չի կարող աշակերտին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ։ Արդյոք՞ յուրաքանչյուր ոք պետք է ունենա կրթության հասանելիություն եւ որակյալ կրթություն ստանալու իրավունք։

Ես կցանկանայի ավելացնել, որ պետական ֆինանսավորմամբ պետական դրամաշնորհ ստանալը բակալավրի աստիճան անվճար սովորելու երաշխիք է։ Այնուամենայնիվ, այն ուսանողները, ովքեր դուրս են մնում բարձր միավորներ ունեցող քվոտայից/ցուցակից դուրս, հետագայում բարդ վիճակում են հյտնվում։

Առանց դրամաշնորհի մնացածները «1+4» ծրագրի առաջին իսկ կուրսից սկսաց, վրացերեն սովորելու համար ստիպված են վճարել 2250 լարի ուսման վարձ։ Լեզվի ուսուցման դասընթացն ավարտելուց հետո ցանկացած բակալավրիատ ծրագրի էթնիկ փոքրամասնությունների համար վճարովի է։

Դրա համար եմ ասում, որ այստեղ գործ ունենք համակարգային անհավասարության հետ։

Ծրագիրը գործում է 2009-2010 թվականներից, սակայն մինչ օրս փոփոխություններ չեն կատարվել ծրագրում։

Վրաստանի մյուս քաղաքացիների համար, ըստ բարձրագույն կրթության վերջին փոփոխության, ընդհանուր հմտությունների քննությունը պարտադիր չէ։ Ես այնպիսի զգացողություն ունեմ, որ ԿԳՆ-ն չի էլ ուսումնասիրել ծրագիրը։ Նրանք սահմանափակվում են կրկնելով, որ «1 + 4» ծրագիրը ամենահաջողներից է։

Այսօր "1+4" ծրագրից օգտվող ուսանողներին օրենքով արգելված է անվճար ծրագրերով սովորել։ Եթե չեք հավատում, կարդացեք կրթության և գիտության նախարարի 2013թ. հրամանը։ Մինչ օրս այս ուղղությամբ փոփոխություններ չեն կատարվել։ Պետության նման քաղաքականությունը խտրական է ազգային փոքրամասնությունների նկատմամբ։ Սա նշանակում է, որ "1+4" նախապատրաստական փուլն ավարտած ուսանողը չի կարողանա անվճար սովորել անվճար ծրագրերով։

Էթնիկ փոքրամասնությունների շրջանների ոչ վրացալեզու դպրոցներում ուսուցիչների/մասնագետների լուրջ ճգնաժամ կա։ Օրինակ՝ 2021-2022 ուսումնական տարվա համար պետության կողմից ամբողջությամբ ֆինանսավորվող կրթական ծրագրերը (այսպես կոչված՝ անվճար ֆակուլտետները) ներառում են մասնագիտություններ, որոնց պակասն իսկապես առկա է Ջավախեթիում։ Դրանք են. Վրաց լեզու/բանասիրություն; Պատմություն; Հնեագիտության; Փիլիսոփայություն; Տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման ինտեգրված ծրագիր; Մաթեմատիկա; ֆիզիկա; Քիմիա; Կենսաբանություն; Տնտեսագիտություն։ Տեղական պետական կառույցներում կադրերի խնդիրը բոլոր ոլորտներում է՝ դպրոցներ, նախակրթարաններ, գյուղատնտեսություն ոլորտում և այլն։

Այսօր ոչ վրացալեզու դպրոցներում աշխատում են ուսուցիչներ, որոնք չունեն ուսուցչի որակավորում: Տնտեսագիտության ուսուցիչը մաթեմատիկա կամ ֆիզիկա է դասավանդում, սպորտի ուսուցիչը քաղաքացիական կրթություն կամ արվեստ է դասավանդում, հաճախ նույնիսկ երաժշտություն: Երբ մենք տեղում չունենք որակյալ կադրեր, պետությունը պետք է հոգա կրթության հասանելիության մասին և խտրականություն չդնի իր քաղաքացիների նկատմամբ: Միայն բավարարել այն փաստով, որ տարեցտարի ավելացել է 1+4 ծրագրում սովորողների թիվը, բավական չէ, հատկապես այն պայմաններում, երբ բոլոր ծրագրերը մեզ համար վճարովի են:

Վերը թվարկված անվճար ծրագրերը չեն կարող մրցել հեղինակավոր (պռիստիժային) մասնագիտությունների հետ: Օրինակ՝ ֆիզիկայի կամ մաթեմատիկաի ֆակուլտետում սովորելն արժե 2250 լարի, նույնքան էլ՝ իրավաբանական կամ բիզնես մասնագիտություններում սովորելը: Այս ամենին ավելանում է պետության խտրական մոտեցումը: Դիմորդը միշտ ընտրություն է կատարում հեղինակավոր ֆակուլտետներում սովորելու ուղությամբ, այլ ոչ թե անվճար ֆակուլտետների վրա, որոնք անվճար չեն ազգային փոքրամասնությունների համար:

Գլխավոր խնդիրը հենց փոքրամասնությունների նկատմամբ պետության տարօրինակ քաղաքականությունն է: Պետությունը մի կողմից ընդունում է, որ պատշաճ կրթություն չի տալիս էթնիկ փոքրամասնություններին, քանի որ 1+4 ծրագիրը հենց այս անհրաժեշտության ճանաչումն է: Մյուս կողմից դա խտրականություն է դնում մեր երիտասարդների նկատմամբ, ինչը արտահայտվում է անվճար ֆակուլտետներում ուսման վարձի սահմանափակմամբ:

Արտոնյալ քաղաքականություն՝ սահմանափակումներով

12 տարի դպրոցում չեն կարող պատշաճ կրթություն ստանալ, ևս մեկ տարի կորցնում է լեզվի դասավանդման նախապատրաստական կուրսում, և ամենակարևորը 1+4 ուսանողների համար անվճար ֆակուլտետներն օրենքով արգելվում են: Առդյոք՞ այս ամենը կարելի է կոչել արտոնյալ քաղաքականություն:

Համեմատության համար կօգտագործեմ 104 տարի առաջ Ազգային խորհրդի կողմից ընդունած հռչակագիրը ազգային փոքրամասնությունների կրթության (եւ ոչ միայն) հարցի վերաբերյալ: Վրաստանի Ազգային խորհրդի 1918 թվականի հունիսի 15-ի հռչակագրում կարդում ենք.

«Կառավարությունն իր պարտքն է համարում իրականացնել Վրաստանի Անկախության ակտում ճանաչված դրույթը, որը Վրաստանի տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների քաղաքացիներին կտրամադրի նույն քաղաքական, քաղաքացիական և ազգային-մշակութային իրավունքները, ինչ Վրաստանի քաղաքացուն»:

Սա կրթության նախարարի 2013թ.-ի հրամանն է, որն այսօր ուժի մեջ է: Հրամանագրում կարդում ենք.

«Անթույլատրելի է ֆինանսավորել բակալավրիատի/ուսուցչի ինտեգրված հավատարմագրված կրթական ծրագրում վրացերենի ուսուցման ծրագրի ավարտից հետո ծրագրային ֆինանսավորման շրջանակներում ընդգրկված անձանց ընդգրկումը:»

Սա բացահայտ խտրականության օրինակ է: Համակարգային խնդիր է, երբ պետությունը չի հասկանում և տեղյակ չէ ազգային փոքրամասնությունների առջև ծառացած մարտահրավերների մասին:

Հարկ է նշել, որ տարիներ շարունակ ազգային փոքրամասնությունները բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն չունեին և 1+4-ը ստեղծվեց հենց այդ անհրաժեշտությունից ելնելով:

Իրականությունը ցույց է տալիս, որ որոշում կայացնողները կամ հեղինակները չեն կարողանում ճիշտ գնահատել առկա իրավիճակի խորքային պատճառները: Արդյունքում, մեզ չեն առաջարկում փոփոխություններ, որոնք կնպաստեն իրական հավասարության ձևավորմանը և ամրապնդմանը: